


Ի.ՃԱԿՃԱԿՅԱՆ

ԱՎԱԶԱԿ

ԿԱԿՈՆ



ՊԵՏՏՈՒՍ
1937

Ստ. Ա. Բ. Ուլյան

894.631

516

8-35

Σμ/Σμ/Σμ/Σμ. η.

Υπερμεγέθυς Υμελνός: (υπερ)

754.

9/12

723

300.

894. 631
D-35

ԻԼԻԱ ՃԱՎՃԱՎԱԶԵ

ԱՅՈՒԳՎԱԾ Է 1961 Ձ.

ԱՎԱԶԱԿ ԿԱԿՈՆ

(ԳՈՆՄ)

Վրացերենից թարգմանեց
ԱՐՄ. ՄՈՒՐՎԱԼԵԱՆ

Խմբագիրներ
Գ. ԱՍԱՏՈՒՐ, ՎԵՍՊԵՐ



516 A
I
6662

Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալբունյան

Գլավիտի լիագոր Կ— 4569. Հրատ. 4115.
Պատվեր 785. Տիրաժ 8000
Տպագր. մամ. $\frac{3}{4}$, մեկ մամ. 51200 նիշ
Հեղինակային 1 մամուլ, քուղբ 72X105

Յերևան, Պետհրատի տպարան, Լենինի փ., № 65.

Տուր ապաստան աղքատներին, ստրուկներին՝
ազատություն,
կապրեն նրանք ու կհիշեն, և կան ինձ
միշտ որհնություն
ՇՈԹՄ. ՌՈՒՍԹՄԱՎԵԼԻ

Մայրենի յերկնին խավարափլիթ՝
Պատեց մթության սեվ քողը տրտում.
Լուսնի շողփի տակ՝ լեռների մթին
Ըստվերներն ընկան Ալագան-հովտում:
Գիշերվա պահակ լուսինը սահուն՝
Թագուհու նման նայում էր հպարտ.
Նրա շողփի հետ՝ խոսում էյին լուռ
Լեռները՝ իրենց գլխով սառցապատ:
Աստղերը հեռու միշտ պեծին տվող՝
Խիևդ էյին առել այն տխուր գիշեր,
Լռակյաց յերկրին՝ սիրուհու գգվող
Շողքը նետելով, վորպես լուս-փշեր:
Յեվ այն աստղերի շողփի գգվանքով՝
Հովիտն աննման խոր նիրհ էր մտել,
Բայց հովը լեռան՝ անտառում սիրով
Տերեվների հետ իր խաղն էր գտել:

Այագանն ահա համառ ու անգուսպ
Գանգատ եր անում, վոնց մարդուց դժգոհ.
Սարերը նրա՝ լոկ տրտունըը խուլ՝
Լուռ լուռ էյին մեն ու սուստոս:
Քնած եր ամեն շնչավոր հետին,
Յեվ ասես հոգնել, յերկինք ու գետին...
Բայց միայն մի տեղ սայլը ծանրաբայլ՝
Ճոռում եր անվերջ լուռ նամբամիջում,
Ու վրան նստած սայլորդի մուայլ
Տլորության յերգը—բախժով եր հնչում:
Այն բախժոտ յերգը սրտումս է բաղվել՝
Վողբի պես տխուր, հենց մահվան ժամին.
Թե պատեց խեղնին վիշտը առավել՝
Ամպի պես արդեն կժշի քամին:

Գնում եր դանդալ սայլը և հանկարծ
Մեկը անտառից ցատկեցրեց իր ձին,
Սայլի մոտ յեկավ, կանգնեց նա հաստատ՝
Վեհություն տալով իր բախժոտ դեմքին:

— Ձե՞ս ցույց տա նամբեն կուղի-Գորայի,—
Հարցրեց նա հպարտ՝ անցնող սայլորդին:
— Ինչո՞ւ չե, ախպեր: Հրեն են սարի
Աջ կողմից կանցնես, մի ձոր կա մոտիկ,
Վոր դուրս գաս, սայլի նամբեն է անցնում.
Եդ նամբեն բռնիր, գնա՛, ու ահա
Քիթը դուրս ցցած մի սար էս տեսնում,
Հենց եդ է, վոր կա, քո կուղի-Գորան:
Ի՞նչ ունես ետեղ,— հարցրեց նա վերջում,
Յերբ ձիավորին ցույց տվեց նամբան,—

Բդանիաշվիլին ենտեղ ե լինում,
Տես, չպատահի քեզ փորձանք, մի բան:
Տեսնում եմ հրես, կուռ ունես դու յեյ,
Այսպէր տղերքից կգոռես շատին,
Բայց բե կսիրես կյանքդ եդ ջահել,
Իսկի չերեվաս դու նրա աչքին,
Յեվ վոչ ել ցույց տուր նժույզըդ նրան,
Թե չե, տես, գլխիդ մի փորձանք կգա:—
Արագ ե, ինչպես գնդակը թռչող,
Նաև անողոք՝ վագոդ գնդակից.
Թե պարտ ե արյուն, հենց զիջիր ու թող,
Լավ ե, ձեռք քաշես, ախպեր, նրանից:

— Դու դարդ մի՛ անի... նրան եմ փնտռում:

Հուզվող նրա պես իմ սիրտն ել ջահել.
Նրա պես յես ել կապրեմ անտառում,
Կյանքիցը հիմի յես ձեռ եմ քաշել:

Յեվ ասելուն պես, վոր ձիուն սագեր,
Սլացրեց հանկարծ սիրելի իր ձին.
Ու ձին ել թռավ, վարպես մի բագե,
Սարն արձագանգեց նրա դռփշունին:

Ասես նախանձեց սայրորդը նրան,
«Ա՛յս, յերանի քեզ».— ասաց իր մտքում.
Գլուխը շարժեց ու վշտի նման
Ինչ—վոր բան իջավ նրա խեղճ դեմքին.
Խարագանն՝ անխոս՝ վերևում շարժեց
Ու նորից թախծոտ՝ անցավ իր յերգին:

Կուղի—Գորայում մի մեծ անտառ կա,
Հնում ապաստանն ավագակների.
Ահռելի ու մութ, հսկա սիրտը փակ,

Նու՛մբ—Խու՛մբ ծառերով, անանցանելի՛:
Այնտեղ եր ապրում ավագակ կակոն՝
Բզանիաշվիլին— յելուգակ դժգոհ:

Վազուց եր արդեն լուսինը մարել,
Յերբ վոր անտառում, մի ծառի տակին,
Բզանիաշվիլին լուռ նինջ եր արել՝
Հալածված աշպես դառնորեն բախտից:
Այնտեղ, նրա մոտ, գեղեցիկ մի ձի
Արածում եր հենց քամբ ու սարք վրա.
Տերեվներից, յերբ տալիս եր քամին,
Խանգարվում եր միշտ հանգիստը նրա:
Հանկարծ վեր քռավ, ականջը սրեց,
Գլուխը քաշեց ու նայեց վերեվ.
Հետո պըտըտվեց, փնչալ սկսեց
Ու ինչ—վոր մի կողմ աչքը սեվեռեց:
Յեվ յերկար նայեց, ու յերբ վոր լսեց
Դռիչունն այլ ձիու՝ իրեն հանելի,
Խրխնջաց հուժկու, ել չհամբերեց,
Ու քունը փախցրեց տիրոջ աչքերից:
Առյուծի նման վեր քռավ կակոն,
Հրացանը իսկույն կանգնեցրեց վրոնի,
Յեվ յերբ վոր տեսավ հովտում ձիավոր,
Գոռաց. «Ո՞վ ես դու, սաս՛, չե՛մ քողնի,
Քարեկա՞մ ես ինձ, քե՛ մի քշնամի»:

ՋԻԱՎՈՐ

— Քարեկա՛մ եմ քեզ, դու հանգիստ յեղիր:

ԿԱԿՈ

— Երևա բարո՛վ յեկար, բարեկամ-ընկեր,
Թող բարի լինի հանդիպումը մեր:

ՁԻԱՎՈՐ

— Ամե՛ն... Այդ դու չե՞ս Բղանիաշվիլին:

ԿԱԿՈ

— Հենց յես եմ, վոք կամ... Ի՞նչ ես կամենում:

ՁԻԱՎՈՐ

— Քեզ հետ միասին՝ մեկ տեղ կյանք ու մահ,
Յե՛կ քեզ հետ մնալ, ապրել եմ ուզում:

ԿԱԿՈ

— Խոսքդ դուր յեկավ... Դու յել դուր յեկար,
Դրա համար ել վստահո՛ւմ եմ քեզ:

ՁԻԱՎՈՐ

— Սրտին սիրա գիտի և ուժին ել՝ ուժ,
Կկիսեմ քեզ հետ վիշտ-ուրախություն:

ԿԱԿՈ

— Խո՛շ-գեղիք, յեղբայր... Խիստ հաբուստ եմ յես,
Այս վողջ անտառում իշխում եմ մենակ.
Ունեմ ընդարձակ այսպես տուն ու տեղ,
Ինձ չի վախեցնում վոտիսը տմարդ:
Իմ տունը հրեն ամեն ծառի տակ.

Վորտեղ վոր մթնեց, լուսացնում եմ յես-
Յեվ քեռ չունեմ ապրուստի շատ բան,
Բայց ուրախ եմ յես այստեղ հոգեպես...
Անտուն ու անտեր և սոված լինել
Անտառում մեռակ՝ գագանի նման,
Նապաստակի պես զգաստ քուն մտնել,
Ու կրել այսպես միշտ զենի ու զրահ.—
Իրավ է, յեղբայր, այս կյանքը հետին
Կարող է մարդու ճանճրալի լինել,
Բայց քախիծն այստեղ մեզ քվում է խինդ,
Վորտեղ իրապես մենի ենի տերը մեր...
Յես ինձ հետ ունեմ յերկաթ-յեղբայրների՝
Հըրացան ու քուր ու ստրնանակ...
Ձե՛ն դավանանի նրանի ինձ յերբեք,
Քանի յես ունեմ կռներ դեռ արձակ:
Այս ձին ել, յեղբայր, ինձ հետ մեծացել՝
Յեղել է անհաղք, յեղել է համառ.
Հազար փորձանից՝ ինձ հետ է անցել,
Յեղել ենի մեկտեղ, տեսել կյանի ու մահ:
Սրանց տրվեցի վտանգի ժամին,
Ու գիտեմ, վոր ինձ չեն դավանանի.
Սիրում է Կակոն միշտ լինել շխտակ,
Յեվ ախպեր-մարդկանց իր կյանքը կտա՝
Այսպես եմ հարուստ ահա յես այստեղ...
Իմ տերության մեջ կեղծիք չի լինում,
Անգութ եմ միշտ ել կեղծողների դեմ,
Բայց հավատարմին յե՛ս ել եմ սիրում:
Իջի՛ր, վոր գնանի, իմ տեղը ցույց տամ:
Քեզ բաժին լինի սեղանիցքս քող,

Ու բե չիմեմ կարգին հյուրընկալ,
 Խնդրեմ դաչաղիս լինես դու ներող:
 Զիավորն իսկուշն վայր բռավ ճիւղ
 Ու սանձը հանեց և շոյեց նրան,
 Ականջը ձգեց, այդպես է հնուց,
 Աչքերը շոյեց գոթա մոր նման:
 Հանեց յափնջին, յետեվը կապած,
 Լիքը խուրջինն էլ իջեցրեց նա ցած,
 Յեվ ապա գարկեց ձեռքը գավակին,
 Քշեց, վոր այնտեղ մոտիկ արածի:
 Հետո նա յեկավ ու վորպես մի հյուր
 Կակոյի դիմաց կանգնեց վեհ ու լուռ:
 Յեվ նրանք աչքով իրար չափեցին,
 Յերկուսով իրար լուռ հավան յեկան.
 Ու մի ծառի տակ հանգիստ նստեցին.
 Յերկուսն էլ այսպես լուռ էյին յերկար,
 Ասես իրար լավ պրախում էյին,
 Բայց վերջը կակոն խոսեց համարձակ.
 — Գիտեմ վոր, յեղբայր, նեղանալու չես,
 Ներող կլինես հարցմունքիս համար.
 Ասա, վո՞րտեղից ծանոթ եմ յես քեզ,
 Կամ ինձ տեսնելու ինչպե՞ս սիրտ առար:

ԶԻՍՎՈՐ

Ծանոթանալ ինձ դժվար չե քեզ հետ,
 Հապա այս մասին խոսեմ ինչ հանգով,
 Հեռու յե անցել հոչակը քո մեծ,
 Մանուկն էլ գիտի, բե ո՛վ է «կակոն»:
 Քեզնից են խոսում մարդիկ ու կանայք,

Ով լեզու ունի, հենց գովում է քեզ.
Հռչակը քո մեծ, վոր նիշտ է հիմա,
Հեքյաթ կը դարձնեն հետևորդները մեր:
Քն խիզախութեան մասին են խոսում,
Անարդար կյանքից այստեղ ես փախելի.
Սիրելի ես արդար կյանքն ու գյուղացուն,
Բարեստութուն,— ա՛յ, ի՛նչ եմ ասել...
Վոր բախտավորին յեղբայր նանաչես,
Կարիք կա՞ արդյո՞ք նրան սիրելու,
Բանն այն է, սակայն, դու նրա՛ն սիրես,
Ով անգութ բախտից տառապում է լուռ:
Արսնն է միայն, քե՛հ հիշում ես դու,
Խեղճ, ուսմիկ մարդուն վոնց յեղբայր սիրել,
Բախտն ուսմիկ մարդու, ցավն ու դառնութեան՝
Սիրած յեղբոր պես նրա հետ կիսել:
Մարդն էլ իսկական հենց նա յե՛ յեղել,
Ճիշտ վոր գտակն էլ ծածկել է գլխին,
Յերանի՛ր նրա մորը, վոր ծնել
Ու կաթ է տվել նման մի տղի...
Այդպիսի վորդուն յերանի կտա,
Բայց չի մեծացնի մայրը հիմիկվա...

Ճանաչում եյի, ու դեռ չեմ տեսել,
Կարոտել եմ լուռ միշտ էլ քո կյանքին,
Ու քեզ հետ ապրել ուզել եմ յես էլ,
Բայց պահել են ինձ տուն ու ընտանիք,
Իսկ վերջը, յեղբայր, ասոված խոռվեց,
Անիվը բախտիս նա ծուռ գլորեց...
Ականջ դիր, ասեմ պատմութունըս նոր,
Ինչ վոր ինձ արեց ցավը իմ կյանքի.

Մի անգամ բախտից, վոք յեղել եմ գոհ,
Ինչպես հալածված փախա նրանից:

Մի մանուկ էյի տասներկու տարվա,
Յերբ մեր բատունին¹ ինձ կտրեց տանից,
Ինձ ուղարկեցին պահելու տավար,
Հայրենի տանից հեռու բշեցին:

Յես դեռ տխրեցի, սիրտըս ամպամած,
Առանց ծընողի դժվար եր ապրել...:

Խինդն ուրիշների՝ ծանր եր ինձ համար,
Զուլալ արցունքն ե աչքիցըս քափվել:

Ինձ հասակակից փոքրիկ տղաներ
Իմ արցունքն էյին յերեսովս տալիս.

Մոռացել էյին իրենց վիշտը մեծ,
Ինձ նման էյին նրանք ել լալիս...

Ամաչում էյի յես ել իմ լացից
Յեվ ընկերներից միշտ հեռու փախած՝

Նստում էյի լուռ մի քփի տակին՝

Արցունքը աչքիս քափում էյի ցած:

Սեվ ամպը, սակայն, անցավ ինձանից,
Իմ վիշտն ել ահա նա իր հետ տարավ.

Յեվ սիրտըս փոքրիկ, վոք ննշվեց ցավից,

Վշտի փոխարեն մի նոր խինդ առավ:

Յեվ յես վարժվեցի իմ այդ նոր կյանքին,

Վաստասում էյի, ծիծաղում, յերգում.

Միտք չէյի անում այլևս իմ տանից,

Ու ել ինձ համար կյանքը չեր սրտում:

Յեղբայր, ի՛նչ խինդով ու ի՛նչ ֆաղցրություք

¹ Բատուն — սլարոն, ճորտատեր:

Պրերբս ուրախ անց էլին կենում .
Վոչինչ չունեյի այնտեղ տխրության,
Ընկերներս ինձ ել չէյին նեղում:
Կով էյինք խնամում մենք հավատարիմ,
Գործին նվիրած և յեռանդ ու սեր .
Ու հսկում էյինք հերքով տավարին,
Ու պահակ կանգնում մենք ամեն գիշեր:
Յերբ վոր սարերում արևն եր քաղվում,
Յեղ աստղերն էյին ժպտում յերկնից,
Յրված տավարը բերում, հավաքում՝
Ըսկսում էյինք համարել կրկին:

Կապելուց հետո՝ անտառի ծայրում՝
Մեր վառած հսկա խարույկի կողքին,
Մենք նստում էյինք ուրախ ու խնդուն
Յեղ ամեն մեկն իր ընթրիքը ձեռքին:
Մեր կատակներից, յերգ ու ծիծաղից
Փախչում եր նույնիսկ քոչունը ծառից .
Բայց յերբ բունը՝ մեզ գալիս եր-պատում,
Մեկը մեզանից հեքյաք եր պատմում:
Լուսաբացի հետ, յերբ մուքն եր հալչում,
Հանգչում եր դանդաղ լուսաստղը հեռվից,
Մեզանից մեկը՝ շուտ մեզ եր կանչում,
Փախցընում քաղցրիկ բունը մեր աչից:
Վեր էյինք քոչում, և մեր ժիր ձայնից
Սրբնանում էյին քնած սար ու ձոր .
Իրենց տավարին՝ ամենքը մեզնից
Բաց էյին քողում ջլուտ ձեռքերով:
Յեղ վոմանք այստեղ յափնջին գցած՝
Գնում, ծուլորեն աչքը տրորում .

Վումանք էլ այնտեղ, դեմքերն ամպամած,
 Տավարը բշում ու տխուր յերգում:
 Յե՛վ մի վարկյանում նախիրն բառաչով
 Փովում էր հանդում կանաչ-արեվուս,
 Ու մենք էլ խաղով, յերգով ու կանչով
 Հավաքվում էյինք սառն աղբյուրի մոտ.
 Լվացվում էյինք ու բունը փախցնում,
 Զովանում մաքուր ու սառը ջրով,
 Թռչկոտում էյինք ու իրար անցնում,
 Յե՛վ նախանաշում խաղով ու պարով,
 Հետո սկսում զանազան խաղեր՝
 Բար էյինք գցում, մերք գնդակը՝ վեր...
 Ու կեսորվա մոտ, բեգարած շոգից՝
 Ցած էյինք բերում տավարը սարից
 Ու հանգիստ տալիս Ալազան-գետում,
 Յե՛վ մեզ էլ նրանց հետե՛վից նետում...
 Ծառ բան էմ հիշում յես մանկությունից,
 Բայց գուրկ էմ արդեն այդ խնդությունից...
 Յերեկոյան դեմ դարձյալ նույն կարգով
 Շուրջն էյինք նստում հսկա խարույկին
 Յե՛վ հե՛ֆյաթ ասում գյուղական հանգով,
 Յերբ հերբ էր հասնում մեզ՝ ամեն մեկիս:
 Այդ հե՛ֆյաթներից սիրտս էր փռոքրկվում,
 Այսոր էլ դարձյալ յես հիշում էմ լավ.
 Խինդ էյին տալիս ինձ այն հասակում
 Ու սեր գարթեցնում անցյալի համար:
 Ե՛հ, մեկը միայն այն հե՛ֆյաթներից,
 Յես ընդունեցի գթոտ մոր նման,
 Յե՛վ շատ-շատ բաներ ասում էր նա ինձ,

Մերք խիւնդ էր տալիս, մերք վիշտը, վոր կա...
Արսենը մեր հին, Արսենը անգին,
Վոր մեզ է հասել հեֆյաթի նման,
Նա յեր հենց, վոր կար, իմ սիրտն ու հոգին,
Նա էր վիշտ ու խիւնդ նորից ինձ համար:
Յե՛վ այսպէս տարված Արսենի կյանքով,
Վարմունքը նրա ինձ դուր էր գալիս.
Ու անում էյի, յելնում որեցոր,
Յե՛վ Արսենուք-յան յերանի՛ տալիս:
Յես ծաղկում էյի բույսի պէս դաշտում,
Յե՛վ մանկուք-յունն իմ՝ ծաղկի պէս մի գարդ.
Տան մասին յերբեք չէյի մտածում,
Ու մերունց մասին չունէյի յես դարդ:
Մի մանուկ էյի, ու փոքրիկ յես դեռ,
Յե՛վ ուրախ ու գոհ՝ իմ մենակ կյանքից,
Ու ք-վում էր ինձ, վոր բոլորն ինձ պէս
Գո՛հ էյին կյանքից ու ինձ խնդակից:
Յես հայր ունէյի՛ քաջ ու ժրաջան,
Յե՛վ անխոնջ, և ժիր և աշխատասեր.
Շատը շատերից՝ չէր հասնի նրան,
Մենակ էր գործում նա որ ու գիշեր:
Նրանից արագ վոչ վոք չէր անի
Դաշտում վար ու ցան և արտում էլ՝ հունձ.
Աստվածն էլ նրան բարիք էր տալիս
Ու բերքով լցնում տունը հինավուրց:
Յե՛վ ք-վում էր ինձ, վոր միշտ էլ այդպէս
Հայրս սրտագոհ կլինէր կյանքից:
Սակայն վերջն արդեն բախտը դառնապէս
Նրան յետ գցեց իր արդար քանակից...

Յեկ դու յեկ, յեղբայր, լսած կլինես,
Վոր բախտը նորտի՝ փոփոխվում է հար.
Թե նորտը յերեկ բախտ է ունեցել,
Նույնն այստր լինել դժվա՛ր է, դժվա՛ր:
Յանկալ ու հուսալ դատարկ է և գուր,
Խարուսիկ է միշտ մեր հույսը ներքին.
Բախտն ու հույսը մեր՝ նորտի, գյուղացու՝
Յերկար չի մնա մի տիրոջ ձեռքին:

Յեկ անց եր կենում ու հորըս կյանքին
Դարդ ու ցավ բերում ժամանակն իր հետ.
Հայրս ծերացավ, իր աշխատանքից՝
Հալ ու մաշ յեղած. այլևս ուժ չունեք...
Թեև նա ուներ ցանկություն մի հին,
Միշտ սեր դեպի գործ՝ ջանալ ու տոկալ,—
Բայց տարիքն իրեն գրկել էր ուժից,
Դարձել էր այդպես նա ուժից ընկած:
Տեսնում էր արդեն հայրս խեղն ու լուռ,
Վար ինքը գրկված ուժ ու յեռանդից
Իր ոջախը հին միշտ յետ է գնում,
Զրկվում է ահա առաջվա տանից:
Այդ ծերության հետ խեղն հորըս գլխով
Մի դժբախտություն, մի ցավ էլ անցավ,
Խոր ծերության մեջ դողերոցքը խոր
Կապվեց նրա հետ, դառնալով նոր ցավ:
Այսպես է, յեղբայր, բախտը գյուղացու,
Սեկ ու դժնդակ և անգութ է նա.
Սունին մի անգամ քե ծովեց կյանքում՝
Դրանից հետո միշտ ծուռ կմնա:

Յես քսան տարու մի յերիտասարդ...

Ձորե՛ղ էյի շատ ընկեր տղերքից .

Հոկել տան գործին, վորպես տղամարդ,

Այսպես ամեն ինչ կգար իմ ձեռքից :

Տիրոջս¹ մոտ էյի, սակայն ինձ նորից

Տուն չեր արձակում, չեր տալիս դադար .

Յես տիրոջ համար գոհում էյի ինձ,

Յեվ յետ եր գնում ընտանիքս հար :

Մի անգամ, արդեն լուռ ու հիվանդուտ,

Նհիարած, դեղնած և ուժից ընկած՝

Խեղճ հայրըս տրտում գնաց տիրոջ մոտ

Աղաչանք արավ, պաղատեց յերկար :

Ճիշտ վոր տերը մեր մի վայրի գազան՝

Չուներ մարդկային վոչ սիրտ, վոչ հոգի,

Հիմար ու կոպիտ և ան ու զարգանդ—

Մարսափ եր ազդում այդպես ամենքին :

Ի՞նչ յերկարացնեմ, քավադի վորդին

Հավն ի՞նչ է, քե կա, վոր վատն ինչ լինի . . .

Հայրըս սրտամաշ, լուռ ու վշտագին

Նման տիրոջ մոտ գնաց իր բանին :

Յեվ սասաց . «Տե՛ր իմ, քեզ մատաղ լինեմ,

Ել չկարացի պատել տան գործին . . .

Իմ վորդուն զիջիր . . . ու չտխրեցնես,

Հենց չկործանես իմ ոջախը հին» :

ՏԵՐ

— Ի՞նչ ես դուրս տալիս :

¹ Տիրոջս— այսինքն ճորտատիրոջս : վրացերեն՝
բատուն :

ՀԱՅՐ

— Ի սեր կյանքիդ, տեր,
Միայն Զաբրոյիս դու տուն արձակիր,
Վոր վոտի կանգնենք քանդված տունը մեր,
Հետո մեզ վրա ինչ վոր ուզես, դիր·
Յե՛վ կոռ ու բեգյառ, տասանորդ ու տուրք,
Մեկի տեղ յերկուս մենք սիրով կտանք,
Թե վոր յետ ընկած մեր ոջախն ու դուռ
Կարանք յետ բերել, մարդ-իսան դառնանք:

ՏԵՐ

— Դա վոր չլիներ դու իմ հրամանից
Կարայի՞ր փախչել ու հարկը չտալ·
Եդ վո՛նց ասացիր, պառավ շուն՝ շանից,
Միթե՞ նման բան մտքիդ մեջին կար:

ՀԱՅՐ

Եդ մասին իսկի յես չեմ մտածել,
Բարկուրջունը քո՛ սիրտըս չի տանջի...
Մակայն ասա՛ ինձ, քո ցավը տանեմ,
Ի՞նչով ծառայեմ, յերբ չունեմ վոչինչ:
Յե՛վ աստված գիտի, վոր յես հիվանդոռ,
Զրկվեցի արդեն ուժից ու հալից...
Յես մենակ, անգոր... յեկել եմ քեզ մոտ,
Ու վորդուս համար՝ նեղուրջուն տալիս...
Քանի վոր ուժ կար, յես չեմ զլացել,
Ու տուն եմ պահել առանց դարդ ու ցավ·
Քրտինքն իմ նակտից իջել է, հոսել,
Բայց, ավա՛ղ, ամեն, ամեն ինչ անցավ:
Հիմի յես անգոր, անհար ու անհաց

A
6662
516



Ու անժամանակ խորը ծերացած,
 Տե՛ս, էլ չեմ կարող հսկել տուն-տեղիս,
 Աստված էլ գիտի... յե՛տ դարձրու տղիս...
 Ու կործանումից տուն ու տեղքս հիմ՛
 Այդպես ազատել գուցե կարենամ.
 Թե աստված սիրես, ինձ մի կործանի,
 Քանի մարդամեջ ապրում եմ ու կամ:
 Հողին եմ սվել իմ յեռանդը մեծ,
 Ես յե ինձ գրկել ուժ ու յեռանդից,
 Քրտինժբս գուլալ նրան եմ սվել,
 Իսկ այսոր ահա նախում եմ դարդից:
 Յե՛վ լուծը չարքաշ յեղել է ուսիս,
 Ու վոչ մի բուսե չեմ դրել այն վար,
 Տվել եմ ամբողջ ուժը տուն-տեղիս,
 Միքե՞ այս անտեր սե՛վ որվա համար:
 Յե՛վ այսար, հիմի, ասա, ի՞նչ անեմ,
 Վար գուրկ չմնամ յես ամեն ինչից.
 Գրառատ յեղիր, քո ցավը տանեմ,
 Խղնա՛ ինձ, տեր իմ, և վորդուս գիջիր...

ՏԵՐ

— Հետո ո՞ւմ հանձնեմ տավարը նրա,
 Ու նման հոտաղ նա՛րեմ վո՞րտեղից.
 Չե, քեզ Զաբրոյին յես յերբեք չեմ տա,
 Թեկուզ և գրկվես դու տուն ու տեղից:
 Տեսե՛ք, պատավ շունն ինչպե՛ս է հաջում,
 Իրենը իմնից լա՛վ է նանաչում...
 Թե, «Յես մեկն ունեմ՛
 «Հագարը կուզեմ»:

ՀԱՅՐ

— Քոնը քեզ լինի, դու ի՛մը տուր ինձ,
Յես իմն եմ ուզում, ել ուրիշ վոչինչ:

ՏԵՐ

— Կորիք, ավանակ, հեռացի՛ր ինձնից:

ՀԱՅՐ

— Վոր կորչեմ քեզնից, ել ո՞ւմ յես դիմեմ,
Յեվ ել ինձ՝ խեղնիս ո՞վ ե ոգնելու.
Յես մեռակ ինչպե՞ս տունըս տե՛ղ դնեմ,
Յերթ դու վորդուս ինձ չես զիջելու:
Ուրիշ կերպ, ասա, ել ինչպե՞ս անեմ,
Ասա, հրամայիր, քո ցավը տանեմ:

ՏԵՐ

— Հոգիդ ել դուրս գա, յես դարդ չեմ անի,
Ինչ կուգես, արա, գլուխդ քարին:

ՀԱՅՐ

— Գլուխըս քարի՞ն... Եդ ո՞վ ե տեսել,
Եդ ի՞նչ ես ասում, յեղավ պատասխա՞ն...
Ապրում մարդամեջ ու մարդ եմք մեմք ել,
Յեվ ապրել ե պետք ու ապրելու բան...

ՏԵՐ

— Լռի՛ր, պտռավ շուն... պտռավ շուն՝ շանից...
Թե չե ծեծելով դուրս կանեմ տանից...
Չեմ նայի, ծերուկ, եդ քո հասակին...
Փայտո՛վ կատանա պատասխան խոսքիդ...

— Վո՞նց քե կըստանամ... յե՛վ սոված դու ինձ
 Յե՛վ դատարկ տաիին քողնում ես խեղճիս,
 Զրկելով ցամաք մի պատառ հացից,
 Դատաստա՞ն ե սա, քե չե մի վոնիք:
 Վորդին կարող ե ծե՛ր հորը փրկել,
 Նրան եղ բանից զրկում ես դու, տեր...
 Դու իմ հարագատ վորդուս չես տալիս,
 Վոր նա ինձ փրկի, ծե՛րության ժամին,
 Ու իմ նիշտ խոսքին դեմ ես դուրս գալիս.
 Թո՛ւ քո նամուսին, կարգ ու կանոնին»...

Այս եր, վոր յեղբայր, մեզ դաղեց նորից,
 Վշտով անջատեց վորդուն իր հորից.
 Կասես, քե ինչո՛ւ այդպես խիստ խոսեց,
 Սակայն վո՛նց աներ իր ցավերի հետ:
 Կարծո՛ւմ ես, քե քիչ աղաչեց նրան,
 Այնքան աղաչեց, ել խոսք չմնաց...
 Բայց ինչպես յերկաթ, ինչպես մի լեռ-հար
 Զփափկեց իսկի ու չիջավ նա ցած:
 Դեհ, մարդ եր նա յե՛լ... ել չհամբերեց,
 Սիրտը հուսահատ, տխուր ու տրտում.
 Անարդարության վրդովմունքը մեծ,—
 Ամեն ինչ քափեց, ինչ վոր կար սրտում:
 Թշնամու նման՝ իր չիրխի կոթով
 Սկսեց ծեծել հորըս՝ տերը մեր...
 Բայց պետք է ասեմ, հայրիկիս վոչ վոք
 Իրեն վողջ կյանքում գետնով չեր տվել:
 Ու նրա պես չեր վոչ վոք ինքնասեր,
 Ամոթից կարմրեց, սիրտը բորբոքվեց...

Յե՛վ ձեռքը տարավ... Բայց ել ուժ չուներ,
Սակայն նա ձեռքը դեպ վեր բարձրացրեց.
Նա տիրոջ գլխին ի՞նչպես բե գարկի.
«Տղե՛րբ, նիպտունե՛ր, տվե՛ք, հա տվե՛ք»:
Ու աղբերացու, հորըս պես մարդիկ
Սկսեցին նրան քաշել, քաշքշել...
Ճիպտտով ծեծեցին հորս հիվանդոտ,
Վոր անուժ ընկավ նրանց վտտփի մոտ...
Տանջանքը նրա ինձ վիշտ է տալիս,
Ու սիրտս տանջում, յերբ միտս է գալիս...
Հայրըս չփրկվեց ծերուքյան համար,
Միրուքը ներմակ՝ չազատեց նրան.
Զփրկվեց մարդով, աստըծու կամֆով,
Հե՛վա՛ց, հե՛ծկլտա՛ց մե՛ծ չարչարանֆով...
Մոտն էյի կանգնած յես՝ խեղն ու կրակ...»

Ու խոր փղձկոցով մրթ-մրթաց այսպես,
Հետո հառաչեց ու գլուխը կախ՝
Խորը տխրությամբ լռեց վերջապես:
Վեր բռավ կակոն ցասման կրակով,
Նայեց Չաֆրոյին լուռ աչքի տակով
Ու հանդիմանեց, յերբ վառվեց հոգին.
— Կանգնած ես յեղել,— ասում ես կողփին,
Յե՛վ քույլ տվիր դու անարգ քշնամուն՝
Հորըդ տանջանփի նիպտունե՞ր տալու:
Ասա, կնարմատ, ի՞նչ էյիր անում,
Քեզ ի՞նչ եր ասում սիրտըդ եդ ժամին,
Մոտը լինեյի, կընկնեյիր և դու,
Յե՛վ տերըդ՝ գազան, վորպես քշնամի...
Ի՞նչ էյիր անում, նայում ու լռո՞ւմ,

Թե ի՛նչպես էլին հորըդ քրքրում...
 Թո՛ւ քո նամուսին, հայր ու վորդուքյան,
 Թո՛ւ քո անունին ու քո մարդուքյան...
 Հորդ էլին ծեծում, ձայն չէլիր հանում,
 Այդ՝ աչքիդ առաջ վո՞նց էլիր տանում...
 Թուրըդ վո՞ր որվա համար էս կապել,
 Վոր կտոր-կտոր գետին չես քավել
 Այդ քո լրբացած ու դաժան տիրոջ:
 Ու դու վոր այդ քո խայտառակ քրով
 Յեկել էս ինձ մոտ, ինչպե՞ս սիրտ առար:
 Գնա՛, մի՛ անի ինձ ամոք-ահար...
 Քեզնից ավագակ չի լինի յերբե՛ք,
 Ծնվել էս, վորպես կինարմատի մեկ,
 Թո՛ւ քո մարդուքյան:

ԶԻԱՎՈՐ

— Այդպես մի՛ խռովիր,
 Դեռ դու Զաքոնյիս լավ չես քանաչել,
 Ու շատ-շատերից յես յետ չեմ ընկնի,
 Վոչ էլ կակոյի թրից կփախչեմ:
 Իմ քուրը այդպես մի խայտառակիր
 Ու ինձ էլ յերբեք չեսես կինարմատ.
 Այդպես մի՛ ծաղրիր... Յեվ ինձ ականջ դիր:
 Մոտ էլի կանգնած յես՝ խեղճ ու կրակ...
 Մինչև տերը մեր՝ ձեռքով կծեծեր,
 Քրքրում էլի, ինձնից քուրդ շինում,
 «Ըստասիր» ձայնը ականջս եր ընկել
 Յեվ ինձ կանգնեցնել դժվար եր լինում:
 Նրան սպանելով՝ գիտեյի արդե՛ն՝

Հողին կտային հորըս՝ աչքը բաց,
 Պատնառը մահվան կլինեյի յես.
 Թե չսպանեյի, հորս ցավն եր մեծ,
 Մնում էյի յես յերկու կրակի մեջ:
 Յեվ այն ժամանակ, յերբ վոր գետնեցին,
 Ճիպտով գարկեցին, տանջեցին անվերջ,
 Աչքս մքացնեց, սիրտըս բռնող վառվեց,
 Իսկույն դեպ հրացան քոս անվեհեր.
 Յեվ դեմ գցեցի յափնջիս ուսից
 Ու տիրոջ կանչին՝ «գարկիր, հա գարկիր»
 Գնդակս վզաց ու խինդ տվալ ինձ,
 Ու սիրտը լոեց գարշ կրծքի տակին.
 Որորվեց ընկալ գագան տերը մեր,
 Վար մորմոռ տվալ, քե մեզ, քե իրեն:

ԿԱԿՈ

— Արեվի՛ն մեռնեմ, քեզ ով վոր ծնեց,
 Հենց մարդ ես յեղել, քրիդ սազական...
 Իզուր չե, վոր դու մոր կաթ ես ծծել,
 Իզուր չե, վոր դու ինձ մտտ հյուր յեկար:
 Աստված քոդ որհնի ու պահի նրան,
 Ով վոր գավակ քե ծնել քեզ նման,
 Սիրում եմ, յեղբայր, քեզ պես տղամարդ.
 Ինչ առաջ ասի, ինձ ծանր ե գալիս.
 Ներիր, ամոթից քիչ ե մնացել
 Կակոն քո առաջ գլուխ խոնարհի:

ԶԻԱՎՈՐ

— Միքե՞ արժանի կարող ե լինել
 Հոր վրեժն արյան՝ այդ գովասանքին.

Չե՞ վոր ամեն մարդ հենց այդպես կաներ,
Տղամարդ լիներ, քե վախկոտ մի կին:
Վոր կշտամբեցիր, ի գուր եր, տեսա՞ր,
Իգուր ե նույնպես այժմ էլ գովասանք:
Սակայն, եհ, կակո... այդ վոր արեցի,
Չբուժեց յերբեք սրտիս ցավը մեծ.
Այն, վոր հոր համար կյանքնս գոհեցի,
Մահամերձ հորս վոչնչով չոգնեց:
Մոռացել էյի ինձ այն ժամանակ,
Ու մնում էյի յես վտանգի տակ...
Հորս մոտ քուս... ընկած եր անշունչ:
Ծունկըս քուլացավ, սիրտըս քունդ առավ,
Խեղճն ամբողջովին կապտած, լուռ ու մունջ,
Ընկած եր գետին, մնացել անշարժ...
Հայրս էլ չկար, մեռել էր արդեն՝
Անժամ, աննաշակ՝ տիրոջ նիպտի տակ...
Բայց, ինչ վոր յեղավ, էլ սրանից դեմ
Հիշելն՝ իսկապես դժոխք է, կրակ»:

Յե՛վ յերբ վերջացրեց, Ջափրոն դառնացած
Ընկավ ու փովեց՝ յերեսը գետնին,
Յե՛վ այսպես յերկար, լուռ ընկած եր նա
Տառապանքների ծանրութեան տակին:
Յե՛վ նրա համար կակոն էլ տխրեց,
Յերկուսն էլ մեկտեղ մի վշտով շնչող...
Թե յերկու սրտին ի՞նչ խոր վիշտ պատեց,
Յերևակայի՛ր, ըզգա՛, ընքերցո՛ղ:

11-ն դեկտեմբերի, 1860 Ք.
Պետերբուրգ.




ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043058

[104]
ԳԻՆԸ 75 ԿՈՊ.

299



И. ЧАВЧАВАДЗЕ
Разбойник како
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.